

ՄԻՆԸՍ ԹՈՒՆԹԵՑԻ

ՏԱԳ ՆԻ ԳՈՎԱՍՏԱՆԻ ՀԵՐՈՍԻ

ի Թոխաթցի Մինաս դպրէ ասացեալ որ ի Լուսաց տունն վախճանեցաւ:

Ի հողոյ հաւասար անձնէ
եւ անարժան ձեր ծառայէ
ի Թոխաթցի Մինաս զըպրէ
շատ կարաւտով բարեւ հասցէ:

Զորպէսքն ձեր հարցանելով,
ի կենցաղոյս որոնելով
առողջ կենայք յերկար ամով,
թէ ի ցամաք եւ թէ ի ծով:

Մըտամուրոս մեղաց գերի,
թուղթ գըրեցի հերիսայի,
շուտով առ ձեզ ուղարկեցի,
միթէ բարի խապար հասնի:

Կամ եւ նայիմ ես դեգերած
անձամբ գըծուծ, միտաւք կորած
եւ աշուրներբս միբափած,
կիսահիւանդ էի պառկած:

Յանկարծակի զգուռն բացին,
զմօհրած նամակն ի յիս տըին
ասցին կարգա դու առանձին
ըղքո թըղթին պատասխանին:

Հիւանդ մարմինս ի դող ելաւ
յանկարծ շուտով առողջացաւ
հոգւով մարմնով ուրախացաւ
երբ հերիսի խապար հասաւ:

Հոգեւոր տէր ես քի ծառայ
քեզ անառակ որդի եղայ
ես զալտեցայ իբրեւ զնա
թէ արժան չեմ զապուլ արա:

Սուրբ վարդապետ քաջ եւ արի
Արթուն անուամբն Վանեցի,
շատ հերիսայ կերցուց մեզի,
մէկին հազար իւրեանն տացի:

Թէպէտ որ եմ խիստ մեղաւոր
հիւանդ հոգւով, ծեր ալեւոր,
ի ձեր առջեւն եմ գըլեկիոր
զապուլ արէք սըրտիւ յորդոր:

Բուն բարկենդանն մաւտեցաւ
ուրախութեան ժամն հասաւ
աբեղաթողն բարձրաւ
մորթեթոթոյն անհետ եղաւ:

21-44: Թ. 797, ԹՂ. 104Ի-108ա (2. Կ.
155ա-159բ) A:

343, ԹՂ. 213ա D:

160, ԹՂ. 201բ B:

493, ԹՂ. 68բ C:

499, ԹՂ. 3 E:

Հրատարակւածն Կոստանէանց՝ Նոր ժող. Ա. 50-56:

Սին, 1894, էջ 132-135 S:

Արեւելեան Մամուլ, 1886, էջ 18-19 M:

Այս դառն տեղն որ մեք անկաբ
ամէն բանէ մահրում ելաք
հոգեւորէն զըրկըւեցաք
եկաք մարմնոյ ծառայ եղաք:

Յոյս ունիմ առ Տէրն ամենի
որ մեզ շուտով նա ողորմի
միթէ փութով մահ չի կամի
դառնամք երթամք ի մեր տեղի:

Բարկենդան է մի մեղադրէք
զինչ որ ասեմ ի վեր չառնէք
ըզհերիսին թապտիրն արէք
եւ կանրխիկի ուտեցուցէք:

Ով Թոխաթցի Մինաս զըպիր
ի հերիսին փէշն կըպիր
թուլցուր զգաւտից եւ կըշտացիր
փափաքանացըդ քո հասիր:

Այ հերիսայ իմ սիրելի
ամենեցուն ես ցանկալի
յերուսաղէմ՝ Է ամէն տեղի
առանց քեզ մատաղ չըլնի:

Այ հերիսայ իմ գովական
ոչ ոք չըկայ ի քեզ նրման
ամէն մարդիկ դէմ քեզ դողան
եւս առաւել ես անարժան:

Այ հերիսայ դու թագաւոր
քաջկակըն քեզ է սպասաւոր
խորվուռն է քեզ մեծ զինաւոր
փիլաւըն քեզ նրմանաւոր:

Այ հերիսայ ընտիր գոված
ապուրներուն մէջն ես աւրհնած
մեռեալքն ի քեզ ապսպրած
քենով փրկին յամէն մեղաց:

Ով զիւր մեռեալըն կու սիրէ
պատարագաւ ըզնա յիշէ
գիշերն ի բուն ըղքեղ եփէ
եւ վաղուրէն առատ բաշխէ:

Ամէն մարդոյ հեշտ ուտելի
եւս առաւել ծերոց դասի.
առանց ծամել ի կուլ տանի
եւ իւր հոգին փառաւորի:

Այ հերիսայ իմ գովելի
բազում բարեաց ես արժանի
շաքարն եւ մեղըն ի դէմ քեզի
բընաւ ի քեզ ոչ նրմանի:

Այ հերիսայ ապուր գոված
ամենեցուն ես դու պատուած
թէ կենդանեաց եւ թէ մեռած
դեղթափ ես դու փորու քաղցած:

Այ հերիսայ իմ գովելի
արժան լինիս դու իմ բերնի
կակուղ լաւշով ի կուլ տայի
կարմիր գինով զքեզ թաղէի:

Ես ծեր ալեւաբքս մեղաւոր
զքեզ կու սիրեմ սրբալի բոլոր

դինչ կերակուր կայ խիստ աղուոր
ամենեցուն դու թագաւոր:

Քաւել թէ ինչ անգէտ մարդ է
որ զքո հարկիսըն չի գիտէ
կամ զքեզ սիրով չըմեծարէ
կամ առանց քեզ մատաղ առնէ:

Քահանայից դասըն երամով
յորժամ ընթրիս լըսեն քենով
զքունըն ծախեն յոյժ խընդալով
թէ հերիսայ կ'ուտենք յովով:

Յորժամ որ առաւաւտ լինայ
յեկեղեցին փութան նորա
այլ ոչ աղաւթք միտքըն կու դայ
թէ հերիսան յերբ պիտի գայ:

Ջերդ որ ըզհերիսան բերին
ըսպասաւորքն յառաջ եկին
ըղիւղն անոյշ ըզորդեցին
եւ բուրվառով խընկարկեցին:

Քահանայից դասըն ցընծացին
սարկաւադաց ջոկքըն բերկրին
եւ ժողովուրդքըն խընդացին
եւ ըզպատառն ըզորդեցին:

Երբ զհերիսան բազմեցուցին
յառջեւ քահանայից եղին
տիկ մի գինի այլ հետ բերին
եւ մատըռուակն ի հետ նորին:

Այ հերիսայ զեւ խեղճ արեր
որ յայս երկիրըն ձգեցեր
տարին անգամ չես հանդիպեր
որ զքեզ ինձիկ ի կեր տայիր:

Ամ խիստ անոյշ ես հերիսայ
երբ արդար եղըն շատ լինայ
կակուղ հացիկն ընկերանայ
ով որ ուտէ ուրախանայ:

Այլ ի՞նչ գովանք տանք հերիսի
երնէկ անոր որ հանդիպի
կամ ես եւ դուն մէն պիտէի
ի սրբտիս մէջ տեղըն տայի:

Ջինչ ազգ որ կան ի յաշխարհի
քեզ գովանք տան ի հետ ինձի.
եւ փափագին ի դէմ քեզի
որպէս մեղու ի դէմ ծաղկի:

Վարդապետաց դասք ամենայն
կրաւնաւորքըն միաբան
յորժամ լըսեն ըզհերիսան
ամենեքեան զվանքն ուրանան:

Իրեցականքն ամենեքեան
զերեցկընջն ըզթարկըն տան,
յամէն ուսումքըն մոռանան
վաղեն 'ւ երթան ի հերիսան:

Աղքատք եւ կոյրք որ կու մուրան
ծերք եւ տըղայք կին պատուական
ամենեքեան համանգամայն
վաղեն 'ւ երթան ի հերիսան:

Մահեցականքն ամենեքեան
թողուն զփիլան եւ ըզգարտան
ըզփախլաւան եւ ըզըրվան
եւ գան ուտեն ըզհերիսան:

Կերակրոց մէջն ես դու գոված
Լուսաւորիչն զքեզ յաւրինաց
արար ըզքեզ եւ հաստատեաց
եւ կերակուր մեզ պատրաստեաց:

Ազնիւ ծաղկանց դու նըման ես
համասփիւռի վարդի թերթ ես
յոր տեղ որ է եփեն ըզքեզ
անմահութեան հոտըն բուրես:

Որպէս զոսկի անապական
եւ անգին քար պատըռական
մեռած հոգիքն ուրախանան
եւ կենդանիքըն քեւ ցընծան:

Հարք եւ եղբարք իմ պատուական
մարեր քուրեր ամենեքեան
խընդրեմ ձեզնէ լալոտական
որ չի մոռնաք ըզհերիսան:

Երբ որ եփէք զհերիսան
ինձ զարկալիս կեր տաք արժա
ի յԱստուծոյ դարձցի փոխան
արքայութիւնն անանցական:

Մեռածքն ամէն ի հող տապան
յորժամ լըսեն ըզհերիսան
ցընծան հոգիքն եւ զուարճանան
եւ արարչին մերոյ փառք տան:

Ի թուականիս հազար ամի
եւ տասն 'ւ երկու թիւ աւելի
եւ ի յամենան փետրուարի
աւրն էր ուրբաթ հինգ համարի:

Բայց այս զարկարս Թոխաթցի
Մինաս անուն մեղաց գերի
եկի անկայ Լովաց երկրի
կարաւտ մնացի ես հերիսի:

Ծեր ալեաւք եմ եւ ըսպիտակ
ակուայ չի կայ բերանս դարտակ
որ հերիսան լինայ տաքտաք
կակուղ պիտայ սեր ու կարադ:

Երգըս գըրած է Մինասի
անմիտ յիմար եւ փանաքի
ձեզ արմաղան բնծայեցի
ըզմեզ յիշէք սիրով սրբտի:

Եւ որ տսէ մեզ ողորմի
բիւրապատիկ իւրենն տացի
արժան լինի ինք հերիսի
եւ մատուցման պատարագի:

Հայր մեր յերկինս ով որ տսէ
ուղիղ սըրտով ըզգիս յիշէ
ինքըն զեկայք ձայնըն լըսէ
յաջակողմեան դասն անցանէ:

Հրտ. Հ. Ն. Ապրիլ 1880

